

ՀՀ-ում Բելառուսի դեսպանն այցելեց Արագածոտնի մարզպետարան

27.06.2014

ՀՀ-ում Բելառուսի արտակարգ և լիազոր դեսպան Ստեփան Սուխորենկոն հունիսի 27-ին այցելեց Արագածոտնի մարզպետարան եւ հանդիպեց Հայրենական պատերազմի վետերանների հետ, ովքեր մասնակցել են Բելառուսի ազատագրմանը:

Մարզպետ Սարգիս Սահակյանը ողջունեց ներկաներին եւ ասաց, որ հանդիպման առիթը վետերանների պարգևատրումն է Բելառուսի ղեկավարության կողմից: Նա շնորհակալություն հայտնեց դեսպանին այն բանի համար, որ մեր հայրենակիցների վաստակն ու ներդրումը ըստ արժանվույն է գնահատում Բելառուսի ղեկավարությունը, եւ այդ վերաբերմունքը չի մարում տասնամյակներ շարունակ:- Այսօր էլ վետերանները մեր կողքին են եւ վայելում են սերունդների սերը, ուշադրությունն ու հոգատարությունը,-ասաց մարզպետը:

Դեսպան Ստեփան Սուխորենկոն արտահայտեց իր երկրի նախագահի եւ ողջ ժողովրդի երախտագիտությունը՝ իրենց հողի ազատագրման համար մարտնչած յուրաքանչյուր մարտիկի հանդեպ: 5 տարի առաջ Նույն առաքելությամբ նա կրկին Արագածոտնում էր եւ պարգևատրել էր մեր վետերաններին:

-Այսօր մեր երկրի համար կարեւորագույն օր է,-ասաց դեսպանը,-70 տարի առաջ այս օրը մեր երկիրն ազատագրվեց գերմանական զավթիչներից, ինչի համար երախտապարտ ենք բոլոր նրանց, ովքեր նպաստել են այդ կարեւորագույն իրադարձությանը:

Նա նշեց, որ իրենց կողմից մարզի վետերանների հանդեպ վերաբերմունքը շարունակական է, եւ այդ գործում մշտապես զգացվում է մարզպետ Սարգիս Սահակյանի հետեւողական ուշադրությունը: Նա ասաց, որ իրենց հաջորդ հանդիպումը կկայանա Բելառուսի ազատագրման 75 ամյակի օրվա կապակցությամբ:

Դեսպանը վետերաններին փոխանցեց Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի շնորհակալական նամակը եւ Բելառուսի ազատագրման 70-ամյակի մեդալը:

Վետերանները զգացված էին իրենց հանդեպ դրսևւորած վերաբերմունքից եւ հղեցին իրենց շնորհակալությունը: